ՀՀ ԱՆ ՅՈԼՅԱՆ ԱՐՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Yeolyan Hematology and Oncology Center, Ministry of Health of Armenia

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆԿԱԿԱՆ ՔԱՂՑԿԵՂԻ ԵՒ ԱՐՅԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
Pediatric Cancer and Blood Disorders Center of Armenia

ՀՀ, 0014, Երևան, Ներսիսյան 7, հեռ. +374 10 28 38 00 · 7 Nersisyan St, Yerevan, 0014, Armenia · URL: www.blood.am

Երեխա՝ [redacted]ն Էսթեր [redacted]

Ծննդյան ամսաթիվ՝ [redacted].

Կլինիկական ախտորոշում՝ Իմուն թրոմբոցիտոպենիա, քրոնիկ ընթացք

2025թ.-ի փետրվարին երեխան տարել է ՍՇՎ, ունեցել է թեթև քթային արյունահոսություն: Մոտ 3 շաբաթ անց նկատել են պետեխիաներ դեմքին և պարանոցին, կապտուկներ վերջույթներին, որոնք դինամիկայում ավելացել են: Մարտ ամսվա սկզբին ՀՀ ԱՆ Յոլյան արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոնում երեխայի մոտ ախտորոշվել է իմուն թրոմբոցիտոպենիա (PLT-3×10⁹/L, մորֆ.՝ եզակի): Ստացել է պուլս թերապիա պրեդնիզոլոնով (4մգ/կգ)՝ 7օր տևողությամբ, այնուհետև աստիճանական իջեցումով: Բուժման 7-րդ օրը թրոմբոցիտների թիվը աճել է 147×10⁹/L, այնուհետև նվազել է մինչև 12×10⁹/L: Հիվանդը վերցվել է հսկողության ԱՈՒԿ-ի մանկական արյունաբանության դիսպանսերային բաժանմունքում: 27.03.2025թ.-ին դիմել են ԱՈՒԿ, կատարված ԱԸՔ-ով PLT-6×10⁹/L, մարմնին պետեխիաներ: Ստացել է բուժում պրեդնիզոլոնով (2մգ/կգ)՝ 21օր տևողությամբ, այնուհետև աստիճանական իջեցումով: Թրոմբոցիտների թիվը բարձրացել է մինչև PLT-42×10⁹/L (մորֆ.՝ 72.000), բուժման ավարտին նվազել մինչև 2×10⁹/L:

18.06.2025թ.-ին՝ PLT-136×10⁹/L

Հուլիսի սկզբին նկատել են կապտուկներ վերջույթներին, երեխան ունեցել է քթային արյունահոսություն: Կատարված ԱԸՔ-ով PLT-13×10⁹/L, ստացել է ն/ե իմունոգլոբուլին (օկտագամ-22.5 գր), 14.07.2025թ.-ին՝ PLT-373×10⁹/L: Օգոստոսին նկատել են կապտուկներ վերջույթներին, երեխան ունեցել է քթային արյունահոսություն երեկոյան: Կատարված ԱԸՔ-ով PLT-11×10⁹/L, ստացել է դեքսամետազոնով պուլս թերապիա (24մգ/մ² հաշվարկով), 4 օր տևողությամբ: Բուժման ավարտին PLT-114×10⁹/լ, սակայն դինամիկայում նվազել են մինչև PLT-7×10⁹/լ:

20.08.25թ.-ից նշանակվել է ռնոլեյդ: Օգոստոսի վերջին նկատել են կապտուկներ և պետեխիաներ մարմնին: Կատարված ԱԸՔ-ով PLT-14×10⁹/L: Ստացել է բուժում պրեդնիզոլոնով (2մգ/կգ)՝ 7օր տևողությամբ, այնուհետև աստիճանական իջեցումով: Բուժման 7-րդ օրը թրոմբոցիտների թիվը աճել է 173×10⁹/L, այնուհետև նվազել է մինչև 20×10⁹/L: Սեպտեմբերին նկատել են կապտուկներ և պետեխիաներ մարմնին, ունեցել է լնդային արյունահոսություն, արյունազեղման օջախներ բերանի խոռոչում: Դիմել են ԱՈՒԿ, կատարված ԱԸՔ-ով PLT-9×10⁹/L, ստացել է ն/ե իմունոգլոբուլին (օկտագամ-23գր), թրոմբոցիտների թիվը 592×10⁹/L: Ըստ ծնողի խոսքերի վերջին օրերին երեխայի մոտ առկա են

կատառալ երևույթներ, նկատել են կապտուկներ և պետեխիաներ մարմնին: Դիմել են ԱՈԻԿ, կատարված ԱԸՔ-ով PLT-10×10⁹/Լ: Ստացել է դեքսամետազոնով պուլս թերապիա (24մգ/մ² հաշվարկով), 4 օր տևողությամբ: Բուժման ավարտին PLT-25×10⁹/լ: Զուգահեռ ստանում է ռևոլեյդ (50մգ/օր), որը ունենալու է շարունակական ընթացք:

Բուժող բժիշկ՝ Մ.Տ. Պետրոսյան

անուն, ազգանուն ստորագրություն

_05._12._2025թ.